ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ 20-ԱՄՅԱԿԻՆ

1965 թ. մայիսի 6-ին տեղի ունեցավ ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի և Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի միացյալ գիտական նստաշրջանը, որը նվիրված էր Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակի 20-րդ տարեդարձին։

Նստաշրջանը ներածական հակիրճ խոսքով բացեց ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր, ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Աղայանը։

Բովանդակալից զեկուցումով հանդես եկավ Սովետական Միության կրկնակի հերոս Դ. Ա. Դրայունսկին։ Բնութագրելով Հայրենական մեծ պատերազմի հիմնական էտապները, նա ընդգծեց, որ ֆաշիզմի դեմ մղված պայքարում հիմնական ծանրությունն ընկած էր սովետական հերոս ժողովրդի վրա։ Սոցիալիզմի երկիրը փայլուն քննություն բռնեց այդ ահեղ փորձության մեջ՝ թե՛ ռազմական ու տնտեսական և թե՛ քաղաքական տեսակետից։ Պատերազմի ընթացքում ավելի կոփվեց Սովետական Միության ժողովուրդների անխախտ բարեկամությունը։ Զեկուցողը բարձր գնահատեց հայ ժողովրդի ավանդը թշնամու ջախջախման գործում։ Հայրենական պատերազմի տարբեր ռազմաճակատներում խիզախորեն մարտնչում էին հայկական ազգային ռազմական միավորումներ, հայ ժողովուրդը տվեց Սովետական Միության բազմաթիվ հերոսներ, ականավոր զինվորական գործիչներ։ Հայրենական պատերազմի տարիներին մեծ գործ կատարեցին փառաբանված զորավարներ՝ Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը, ծովակալ Ի. Իսակովը, ավիացիայի մարշալ Ա. Խուդյակովը (Խանֆերյանց)։ Այնուհետև զեկուցողն ընդգծեց Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության տարած հաղթանակի պատմական նշանակությունը։

Պատմական գիտությունների թեկնածու, պահեստի գնդապետ Ա. Հարությունյանը սեսիայում զեկուցեց «Հայրենական մեծ պատերազմի պատմության բուրժուական նենգափոխումը» թեմայով։ Նշելով, որ վերջին երկու տասնամյակում արտասահմանում լույս են տեսել բազմաթիվ գրքեր երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ, զեկուցողը բնութագրեց բուրժուական պատմաբանների հիմնական քաղաքական նկրտումները։ Եթե արևմտագերմանական պատմաբանները, Հիտլերյան բանակի նախկին գեներալները ձգտում են ամեն կերպ նսեմացնել Սովետական Միության հաղթանակի նշանակությունը, իսկ իրենց պարտության ամբողջ մեղքը դցել Հիտլերի վրա, ապա անգլիական, ամերիկյան, ֆրանսիական պատմաբանները, ինչպես և հուշագրությունների հեղինակները բոլոր միջոցներով ձգտում են գերագնահատել դաշնակիցների զորքերի դերը, աղավաղելով պատմական ճշմարտությունը։

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ցուցաբերած մասնակցության լուսաբանմանն էին նվիրված պատմական գիտությունների թեկնածուներ Ս. Խարմանգարյանի, Ե. Խալեյանի և Երևանի պետական համալսարանի դասախոս Տ. Դրամփյանի զեկուցումները։ Ս. Խարմանդարյանը կանգ առավ պատերազմի շրջանի Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական տենդենցների վրա, ցույց տալով այն փոփոխությունները, որ տեղի ունեցան ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ։ Զեկուցողն ընդգծեց Սովետական Հայաստանի բանվորների ու գյուղացիության հերոսական աշխատանքը թիկունքում, հայ ժողովրդի զավակների սխրագործությունները ռազմաճակատում և պարտիզանական կռիվներում։ Ե. Խալեյանը իր զեկուցման մեջ հանգամանորեն խոսեց եվրոպական երկրներում ծավալված պարտիզանական և դիմադրական շարժումներին հայերի ցուցաբերած ակտիվ մասնակցության մասին։ Հազարավոր հայ զինվորներ, որոնք գերության մեջ էին ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներում, արտակարգ արիություն ցուցաբերեցին և դիմադրական շարժման մարտիկների շարքերում հերոսաբար մարտնչեցին գերմանական օկուպանտների դեմ։ Կենտրոնական և Հարավային Ֆրանսիայի դիմադրական շարժման մեջ հայերի կատարած դերին

էր նվիրված Տ. Դրամփյանի զեկուցումը։ Բերելով մի շարք նոր փաստեր ֆրանսիական կոմպարտիայի հայկական սեկցիայի գործունեության և դիմադրական շարժման հայերի մասնակցության վերաբերյալ, զեկուցողը նշեց, որ այդ շարժման շարքերում ընդգրկված էին ինչպես Ֆրանսիայում ապրող հայերը, այնպես էլ սովետական հայ ռազմագերիները։ Նրանց հերոսական պայքարը բարձր գնահատվեց ֆրանսիական ժողովրդի կողմից։

Պահեստի գեներալ-մայոր Ա. Մարտիրոսյանը սեսիայում խոսեց Հայրենական պատերազմի սկզբնական շրջանի գնահատության հարցի մասին սովետական պատմագրության մեջ։ Նշելով պատերազմի սկզբում սովետական զորքերի յուրջ անհաջողությունները անտեսելու միտումը անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում, նա ընդգծեց, որ վերջին տարիներին մեր պատմագրության մեջ հաղթահարվեց այդ սուբյեկտիվիստական մոտեցումը, բացահայտվեցին մեր զորքերի անհաջողությունների իրական պատճառները։

Պատմական գիտությունների դոկտոր Խ. Բարսեղյանը իր զեկուցման մեջ մասնավորապես կանգ առավ սովետահայ պատմագրության ձեռք բերած հաջողությունների և հետագա խնդիրների վրա՝ Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի պատմության գիտական խոր ու բազմակողմանի լուսաբանության ասպարեզում։

Միացյալ գիտական նստաշրջանին մասնակցում էին գիտաշխատողներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներ, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ, նախկին պարտիզաններ, պահեստի սպաներ ու գեներալներ։

Կ. ՍՈՒՐԵՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

1965 թ. ապրիլի 20-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի միացյալ գիտական սեսիան՝ նվիրված 1915 թ. Հայկական մեծ եղեռնի 50-րդ տարելիցին։

Ներածական խոսքով բացելով սեսիան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը ասաց.

— Հիսուն տարի առաջ սուլթանական Թուրքիայի կառավարողները կազմակերպեցին արևմտահայության ցանգվածային կոտորածներ, կատարեցին աշխարհի մի ոճրագործություն, որը դարձավ մարդկային պատմության սև էջերից մեկը։ Երիտթուրքական կառավարությունը, իրագործելով նախապես մշակված իր ծրագիրը, ամենաբարբարոսական միջոցներով կոտորեց ավելի քան մեկ ու կես միլիոն հայ խաղաղ բնակչություն, թալանելով ու ամայացնելով Արևմտյան Հայաստանը։ Թուրք բռնապետները ձգտում էին իրականացնել հայ ժողովրդին հիմնովին բնաջնջելու հրեշավոր ծրագիրը, բայց նրանց չհաջողվեց մինչև վերջ հասցնել իրենց սև գործը։ Այդ ծրագիրը կարող էր իրագործվել, եթե չլինեին Լենինն ու Մեծ Հոկտեմբերը։ Արյունաքամ եղած հայ ժողովուրդը 1920 թ. նոյեմբերի 29-ին իր բախտը մեկընդմիշտ կապեց Հզոր Ռուսաստանի, սովետական իշխանության, կոմունիզմի գաղափարների հետ։ Ռուս մեծ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ժողովուրդների օգնությամբ ու աջակցությամբ Հայաստանը զարձավ ծաղկուն սոցիալիստական հանրապետություն։ Մենք ստեղծարար, խաղաղասեր ժողովուրդ ենք,— այնուհետև ասաց Վ. Համբարձումյանը,— հոգևոր ու նյութական արժեքներ ստեղծելու համար մեզ անսահման հնարավորություններ տվեցին Մեծ Հոկտեմբերը, կոմունիստական կուսակցությունը, սովետական երկրի բոլոր ժողովուրդների բարեկամությունը։

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Նազարյանը սեսիայում զեկուցեց «Հայ ժողովրդի գենոցիդը և միջազգային իմպերիալիզմը» թեմայով։ Նա բերեց բազմաթիվ արխիվային փաստեր ու վավերագրային այլ կարգի նյութեր, որոնք անառարկելիորեն վկայում են, որ կես դար առաջ տեղի ունեցած հայկական կոտորածները ոչ թե տարերային բնույթ էին կրում, այլ իրագործվում էին թուրք կառավարողների կողմից ամենայն մանրամասնությամբ նախապես մշակված ծրագրին համապատասխան՝ պետական կարգով։ Հայ ժողովրդին բաժին ընկած ահավոր ողբերգության համար, ընդգծեց զեկուցողը, երիտթուրքերի հետ միասին հանցավոր է նաև միջազգային իմպերիալիզմը, որը կեղծ խոստումներից այն կողմ չանցավ և իր շահագիտական քաղաքականությանը հետամուտ՝ ամենավճռական պահին լքեց տանջահար ու արյունաքամ եղող հայ ժողովրդին։ Սակայն կենաց և մահու հակատագրական սրերին հայ ժողովուրդը իր հույսը կապեց սովետական իշխանության հետ, որի հաղթանակն էլ հենց փրկություն և վերածնություն բերեց նրան։